

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 27-ին, հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 18-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում գրական-գեղարվեստական երեկո՝ նվիրված Սուրբ Գրիգոր Նարեկացուն:

Հանդիսությանը նախագահում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Ներկա էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող արտասահմանյան և ներքին թեմերի առաջնորդները, որոնք Վեհափառ Հայրապետի հրավերով ժամանել էին Մայր Աթոռ՝ ներկա գտնվելու Հայաստանի 60-ամյակին նվիրված հանդիսություններին.

Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյան, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ.

Տ. Վաչե արքեպ. Հովսեփյան, ԱՄՆ-ի հայոց արևմտյան (Կալիֆոռնիա) թեմի առաջնորդ.

Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյան, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ.

Տ. Գարեգին արքեպ. Գազանճյան, Նոր Զելանդիայի և Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ.

Տ. Ներսես եպս. Պոզապալյան, Անգլիայի հայոց հոգևոր առաջնորդ.

Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյան, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ.

Տ. Ավագ ծ. վրդ. Ասատուրյան, Իրաքի հայոց թեմի առաջնորդ.

Տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյան, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ.

Տ. Գյուտ եպս. Նագգաշյան, Փարիզի հայոց հայրապետական պատվիրակի փոխանորդ.

Տ. Սարգիս քհն. Սարգիսյան, Միլանոյի հայոց հոգևոր հովիվ:

Հանդիսությանը ներկա էին նաև.

Տ. Պսակ արքեպ. Թումայան (Լոնդոնից).

Տ. Գնել եպս. Ճերեճյան (Բեյրութից).

Մայր Աթոռից և ներքին թեմերից հանդիսությանը մասնակցում էին նաև.

Տ. Սիոն արքեպ. Մանուկյան, ատենապետ Գերագույն հոգևոր խորհրդի.

Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյան, Մայր տաճարի լուսարարապետ և Բաքվի հայոց թեմի առաջնորդ.

Տ. Նարեկ եպս. Շաքարյան, Շիրակի թեմի առաջնորդ.

Տ. Գևորգ եպս. Սերայդարյան, վրահայոց թեմի առաջնորդ.

Տ. Արսեն եպս. Բերբերյան, դիվանապետ Մայր Աթոռի.

Հանդիսությանը ներկա էին նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը և այլ հյուրեր:

Երեկոն ներածական խոսքով բաց է անում հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը, որից հետո Նարեկացու

կյանքի և ստեղծագործական հարուստ ժառանգության մասին զեկուցումով հանդես է գալիս ճեմարանի Բ լսարանի ուսանող Վարդան Բաղդասարյանը, որը հանգամանալից ձևով ներկայացնում է Նարեկացու կենսագրությունը, տալով նրա ստեղծագործական ժառանգության ընդհանուր բնութագիրը, կատարում հետևյալ հաստատումը.

«Գրիգոր Նարեկացին հայ ժողովրդի ոգու հզոր ժայթքումն է: Նրանով մի նոր աստիճանի բարձրացավ հայ բանաստեղծությունը, և հայ գրականությունը թևակոխեց զարգացման մի նոր փուլ, մի նոր շրջան: Հանձին Նարեկացու, հայ ժողովուրդը, առաջին անգամ, դեռևս մեծ Դանթեից չորս-հինգ դար առաջ, հնչեցրեց վերածննդի շեփորը»:

Զեկուցողը հատկապես կանգ առավ այն հանգամանքի վրա, որ Նարեկացին հայ ժողովրդի կողմից համարվել է իբրև սուրբ և հրաշագործ դեռևս իր կենդանության օրոք: Նրա մասին պատմվել են բազմաթիվ ավանդություններ: Ժողովուրդը նրա Նարեկ աղոթամատյանին վերագրել է բուժիչ զորություն, իր սրտի վերքերը բուժել է դրա օգնությամբ:

Զեկուզողն ասաց. «Հայ ժողովուրդը դարերով այս պոեմը կարդացել է որպես աղոթագիրք, հավատացել է սրա բուժիչ զորությանը: Հայ տառապած ծերունին իր վերջին շունչը փչել է՝ այս գիրքը կրծքին սեղմած, հայ պանդուխտը այս գիրքն է դարձրել իր ուղեցույցը, հայ զինվորը պատերազմի դաշտ մեկնելուց առաջ իր ուխտի աղոթքը սրանով է մրմնջացել, որևէ հիվանդի այցելելիս հայ եկեղեցականը Ավետարանից առաջ այս Սուրբ Նարեկն է կարդացել: Նարեկը հայ հավատացյալի համար դարերից ի վեր եղել է ամենաբուժիչ դեղը, որովհետև ուղղակի ներգործել է մարդու հոգու, նրա ներքին աշխարհի վրա»:

Ապա վերլուծելով Նարեկացու մի շարք ստեղծագործությունները, տալով դրանց հոգևոր ու բարոյական մեծ արժեքը և հայ գրականության պատմության մեջ նրա կատարած անգնահատելի դերը, բանախոս-ուսանողն իր զեկուցումն ավարտում է հետևյալ խոսքերով. «Հիրավի, արդեն Գրիգոր Նարեկացին դուրս է եկել ազգային շրջանակներից և ոչ միայն Աստծուն, այլև ողջ մարդկությանը լսելի է դարձնում մեր դարահալած ժողովրդի հոշոտված, բայց անարատ հոգու մորմոքն ու վիշտը»:

Բանախոսությունից անմիջապես հետո ընկրսվում է երեկոյի գեղարվեստական բաժինը: Առաջինը Գրիգոր Նարեկացուն նվիրված իրենց ստեղծագործություններն են կարդում Բ լսարանի ուսանողներ Աշոտ Պետրոսյանն ու Սմբատ Արիստակեսյանը: Այնուհետև հոգևոր ճեմարանի երգչախումբը, ղեկավարությամբ ժողովրդական երաժշտության դասախոս Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանի, կատարում է Ալան Հովհաննեսի «Վասպուրական» և Մակար Եկմալյանի «Ո՞վ Հայոց աշխարհ» խմբերգերը: Ապա Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» երկի թեմաներով խմբագրված գրական-երաժշտական ասքի (կոմպոզիցիայի) կատարմամբ հանդես են գալիս հոգևոր ճեմարանի մի խումբ ուսանողներ՝ ղեկավարությամբ ճեմարանի գրաբար լեզվի դասախոս Երվանդ Մելքոնյանի:

Գործ՝ հոգևոր ճեմարանի Գ դասարանի ուսանող Մկրտիչ Ասլանյանի (Ծիրացի)

Երեկոյի ավարտին Նորին Սրբություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր գոհունակության ու գնահատանքի խոսքն է հղում այդ գեղեցիկ և հոգեշեն երեկոյի կազմակերպիչներին ու մասնակիցներին և, տալով Իր հայրական օրհնությունները, հրավիրում է Միացյալ Նահանգների արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանին՝ արտահայտելու երեկոյից ստացած իր տպավորությունը:

Գերաշնորհ սրբազան հայրը նույնպես հայտնելով իր շնորհակալությունն ու գոհունակությունը՝ ասաց.

ԱՐԵՎԱՍՏԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ

Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի ողջույնի խոսքը

Այս մթնոլորտը մեր ընդհանուր Եկեղեցվո կյանքին մեջ ծաղկաստան մը կհուսադրե, սկիզբ մը կնշանակե, և այդ ծաղկաստանը և սկիզբը փառքի ճամբան կբանա:

Այս երեկո այս ծաղկաստանին մեջ տեսանք թե կարելի է, կարելի է որ Աստուծո տված շնորհները ծաղկին: Բայց այդ շնորհները խնամող մը պետք է:

Վեհափառ Տեր, Դուք այդ խնամողն եք, այդ Հայրն եք, այդ Ուսուցիչն եք, այդ Առաջնորդն եք: Եվ մենք բոլորս՝ հետևողներ, մտիկ ընողներ, հուսացողներ, խանդավառվողներ, ապագային նայողներ և ծառայության պատրաստվողներ:

Գործ՝ հոգևոր ճեմարանի Գ դասարանի ուսանող Վահան Խաչատրյանի

Այդ պարզ փայտյա խաչը բեմին այդ անկյունը դրված, եթե կուզեք, ներկայացնե թող Նարեկացին ինքը՝ կտրված Նարեկա վանքին պուրակեն, միջնադարու իր կյանքին և իր շրջանակին մեջ: Պատերեն կախված և աշակերտներու ձեռքով գծված այս նկարները՝ ներկայացնող մեր ներկա դարը: Այդ արտասանողները, երգողները՝ ամբողջ դասը հրեշտակաց, շնորհներով լեցուն:

Եվ այս բոլորին արժեքը այն է՝ որ կդնե մեզ կարգապահության մը մեջ, տիսիպլինի մը դեմ, որ առաջին և հիմնական պայմանն է շնորհներու ծաղկումին: Կարգապահություն մտքի, կարգապահություն արտահայտության, կարգապահություն շնորհքի շղթային: Եվ ես որ ապրած եմ իմ մանկության այս նույն տարիներուն այսպիսի մթնոլորտի մեջ, դարձյալ խնամատարությամբը այնպիսի հոգիներու որոնք այս շունչը ունեին, չէի կրնար առանց հուզումի հիշել զանոնք, հիշել զմեզ, ու նաև ուրախանալ, որ Լուսավորչի կանթեղը և անոր պլպլացող շունչը անմեռ ու անմար է տակավին:

Այս է մեր ժողովուրդին սպասածը մեզմե իբրև հոգևոր ծառաներ: Այդ է հուսահատությունը մեր ժողովուրդին երբ չի տեսներ այդ շնորհներուն ծաղկումը: Բայց ինչ ուրախություն, ինչ խանդավառություն կճոխանա միտքերուն, սրտերուն մեջ անհատներուն և բազմություններուն, երբ տեսնեն, երբ զգան որ մեր հայրերուն հավատքը, մեր հայրերուն շունչը կենդանի է տակավին, առողջ է տակավին, ներշնչող է տակավին:

Այս գիշեր, ինձի համար, Մայր Աթոռի կյանքին մեջ այս հուսադրությանց շառավիղն է որ կբացվի: Ծարունակություն մըն է որ կապահովվի: Եվ անկասկած, Ամենայն Հայոց Հայրապետը որ 25 տարիներու գահակալության Իր կյանքին մեջ տքնեցավ ծաղկեցնելու ինչ որ կարելի էր ծաղկեցնել շինարարական տեսակետեն, հարաբերությանց տեսակետեն, վստահ եմ որ Իր միտքին մեջ ուներ այս մեկը ևս: Այդ բոլորը այս մեկին համար, հոգևոր ներշնչումին, հոգիներու վերածաղկումին համար:

Եվ երբ տեսնե Իր զավակներուն մեջ շնորհալիներ (և անոնք կան, անոնց ծլարձակումը հայտնվեցավ այս գիշեր), շնորհքով լեցուն անձեր՝ որոնք իրենց սրտին քերթվածը կուտան, որոնք իրենց կարգապահ մտքին խոսքը կուտան, որոնք իրենց խմբական արտասանության կարգապահության շնորհքը կարտաբերեն՝ մենասությամբ, երկյակ խոսքով, խմբական արտասանությամբ, գրաբարով, աշխարհաբարով, երգով, նվագով, իր հոգիին ներծոր ուրախության առագաստներն է որ բացված կզգա ալիքներուն վրա ծաղկող իր տունին:

Ծաղկած տունն է որ նորեն կշենանա:

Այս ուրախության համար, Վեհափառ Տեր, շնորհակալ ենք Ձեզի, մանավանդ մեր այն եղբայրներուն կողմե, որոնք արտասահմանյան անապատին մեջն են, որոնք օտար մշակույթներու դիմաց կբացվին շատ հաճախ, և ավելի գեղեցիկներն ալ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ (27 ՆՈՅԵՄԲԵՐ 1980 Թ.)

թերևս կրնան տեսնել, ավելի կատարյալներն ալ կրնան տեսնել, և սակայն այն վայելքը որ այստեղ այս պահուն կզգան, այնտեղ չի այցելեր իրենց: Այնպես որ Նալյան պատրիարքին այս խոսքը (որ բանախոսը հիշեց) ըստ որում «խեցիե դուռ մըն է» իր շինածը «ադամանդյա պալատին համար» իմաստ մը ունի իր տեղը: Բայց այստեղ՝ «մենք զմեզ կուտանք», ըսին բոլոր կատարողները: Եվ ես «մենք զմեզ կուտանք» հավաստումը կնկատեմ ամբողջական նվիրաբերում, որ թանկագին է ոսկի շղթայի մը նման:

Իմ մաղթանքս՝ որ այս ոսկին որքան ալ փոքր, աճի ու բարձրանա Մասյաց սարին բարձրությամբ:

Երեկոյին առանձին շքեղություն հաղորդեց հոգևոր ճեմարանում առաջին անգամ կազմակերպվող թեմատիկ կտավների ու գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը՝ նվիրված Գրիգոր Նարեկացուն: Աշխատանքները, որոնք կատարել էին ճեմարանի Գ դասարանի ուսանողներ Վահան Խաչատրյանն ու Մկրտիչ Ասլանյանը, դիտվեցին մեծ հետաքրքրությամբ և արժանացան ներկաների գնահատանքին: Նկարները ստեղծված էին հիմնականում Գրիգոր Նարեկացու թեմաներով, որոնք արտահայտում էին Նարեկացու մասին ստեղծված այլևայլ ավանդությունները:

Նկարիչ տղաները փորձել են թափանցել «Ողբերգութեան Մատեան»-ի էությանմեջ, հաղորդվել նրա ոգուն: Որոշ նկարներում կարողացել էին ընդգծել մեծ բանաստեղծի ու սուրբի հոգու խորությունն ու թռիչքը:

Երեկոյի վերջում ճեմարանի ուսանողության կողմից հյուրերին տրվեցին հուշանվերներ:

Երեկոն, որն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով, մի նոր ու բովանդակալից էջ բաց արեց հոգևոր ճեմարանի պատմության համար և այն հանդիսացավ միջնադարի մեծ սուրբին՝ հարգանքի տուրք և փառաբանություն:

ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ